

ՆԵՐՈՆ ԿԵՑՑՈՒՄ ԵՐԵՒԵԼԵՆ ԲՈՂՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆԵՐ

ՓՐ. ՎԵՐԵՆԵՐ ՀՈՒՐ

(Շարունակութիւն):

ԳՂՈՒՅ Բ.

ՆԵՐՈՆԻ ՀԻՒՄՍՈՒՄ-ԱՐԵՒԵԼԵՆ ԲԱՂՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆԵՐ

Մոմսէն¹ առաջինն է, որ Ներոնի եթովպական ծրագրները ճշգրիտ անջատած է անոր դէպի Կալիպոսիան երկիրները մտադրած արշաւէն: Այս ձեռնարկութեան հայող շարք մը աղբիւրներ հասած են մեզի: Տակիրտոս (Տ. ԺԵ. 36), կայսեր 64ին դէպի արեւելք ծրագրած ուղեւորութեան առթիւ, կը խօսի նաև եգիպտականին կից ուրիշ ծրագրներու վրայ. Դիոն (ԿԳ. 8, 1) 66 տարուոյն համար կը պատմէ, թէ Ներոն անձամբ Եթովպիա եւ Կալիպոսիան դռներն արշաւելու դիտումէն ետ կեցած էր. Սուետոն (Ներոն, 19) կը յիշատակէ դէպի Կասպեան դռներն արշաւանքը, որու համար Ներոն «Աղեքսանդր Մեծի փառանք» անուան տակ հակայհասակ խալաթներէ նոր լեզոն մը զօրակոչած է. բաց աստի 68ին Բրիտանիայէն Փ. Գեմինա լեզոնը իր դէպի Կալիպոսիան շարունակելով Իլլիրիա հասած էր²: Վերջապէս Տակիրտոս (Պոմ. Ա. 6) կայսեր Կալիպոսի մէջ ունեցած դիտումներու մասին քիչ մը մանրամասնօրէն միակ տեղեկութիւնը պահած է մեզի, երբ կը խօսի Գերմանիայէ, Բրիտանիայէ եւ Իլլիրիայէ հաւաքուած գունդերու վրայ, զորոնք Ներոն ընտրելով՝ Աղուանից աշխարհին մէջ պատերազմի մը պատրաստութեան համար՝ Կասպեան դռներն ուղարկած է: Ուրեմն այս արշաւին նպատակն էին Կասպեան դռները եւ Աղուանից երկիրը: Տակիրտոսի մեզի հասած այս բնագրին ի նպաստ կ'ելլէ այն իրողութիւնը, որ Կասպեան դռները — Դերբենդի կիրճը, լեռնաշղթային արեւելեան ստորոտին եւ Կասպեան ծովու միջեւ այդ նեղ անցքն — իրապէս Աղուանից երկրին մէջ կը գտնուէին:

Սակայն Պլինիոսի (Չ. 40) տուած խոտորող մէկ տեղեկութիւնը այս պարզ ու պայծառ մեկնութիւնը մեծապէս կը վտանգէ:

Կուրի գետաբերանէն հարաւ հաստատուած Կասպեան ժողովուրդը յիշած պարագային՝ կ'ուղղէ շատ տարածուած սխալ մը, որու դո՛հ դացած են, կ'ըսէ, նոյն իսկ Կորբուզոնի դէտերը. ասոնց քարտէսին վրայ լեռնաշղթային մէջտեղը գտնուող կիրճը, զոր Աղեքսանդր երկաթեայ դռնափեղկերով աղիւն տուած էր (Չ. 30), սխալմամբ Կասպեան դուռ անունով նշանակուած է: «Ներոն եւս, կը շարունակէ նա, իր արշաւին նպատակակէտ կը նշանակէ Կասպեան դռները, երբ հասնիլ կ'ուղչէր ա'յն կիրճը, որ Վրաստանի միջէն Սարմատներու երկիրը կ'առաջնորդէ եւ որ Կասպեան ծովէն բարձրաբերձ լեռնաշղթայով մը կը բաժնուի: Սակայն Կասպեան ցեղերու սահմանին վրայ կայ ուրիշ կիրճ մը եւս, որ Աղեքսանդր Մեծի գործերն հետապնդած ժամանակ միայն յայտնի կը ճանչցուի»:

Պլինիոս չոր ու ցամաք խօսքերով կը հաստատէ, թէ Ներոնի արշաւը ուղղուած էր ոչ թէ դէպի Դերբենդի կիրճը եւ Աղուանից երկիրը, այլ Դարիէլի կիրճէն Կալիպոսի հիւսիս Սարմատներու երկիրն՝ ուրեմն նոտակայ Ալաններուն դէմ: Մոմսէն³ ժամանակակից Պլինիոսի այս ըստ երեւոյթին պայծառ ու վաւերագրիչներու վրայ յեցած տեղեկութիւններու հաւատարմով՝ փորձած է Տակիրտոսի բնագրը հաշտեցնել անոր հետ, համարելով թէ վերջին հեղինակս Կալիպոսի այս երկու նմանանուն ցեղերն իրարու հետ շփուած է: Ասով դէպի Կասպեան ծով ձգտող շարժումը՝ ըմբռնուած է իբրև պետութեան սահմաններուն սպառնացող սարմատական ցեղերու արշաւը կասեցնելու համար ձեռնարկուած գործողութիւն մը: Ներոնի վերջին տարիներուն Ալաններու դէմ արշաւի մը մեծ հաւանականութիւնը պատճառ եղած է, որ Մոմսէնի այս ենթադրութիւնն ընդհանուր ընդունելութիւն գտնէ⁴:

Սակայն ես՝ որ հակառակ այս բնագրանուր ըմբռնումին հասուն խորհրդածութենէ յետոյ կը մերժեմ դայն, պարտական եմ առ այդ մանրամասն իմ պատճառարանութիւններս տալ: Նախ Տակիրտոսի տեղեկութիւններն աշխարհագրօրէն այնքան բացորոշ են, որ դանտը առանց վարանումի չենք կրնար

ի նպաստ Պլինիոսի տեղեկութիւններուն անտեսել. քաղաքական եւ տնտեսական ծանր պատճառներ Տակիրտոսի պատմուածքին թեր կ'ելլեն: Վերջապէս պիտի տեսնենք թէ Պլինիոս Կասպից ծովու եզերագաւառներու տեղագրութեան մէջ մասնաւորապէս գէշ աշխատած է: Ըստ այսմ իմ ըմբռնումովս երկու ինքնակաց աւանդութիւն ունինք, որոնցմէ տակիտեանը նախապատուութեան արժանի է:

1. Կասպեան արշաւին նպատակը:

Նախ պէտք է ճշդենք Կասպից դռներու Աղուանից երկրին հանդէպ ունեցած դիրքը եւ առ այս նախ պէտք է ստուգենք Կասպեան ժողովուրդներու բնակավայրերը: Կասպեան երկիրները հին դարերու մէջ երեք պետութիւններու հետ աղբիւրի մէջ կը գրուին. 230ական թուականին Ատրպատականի Արտաւազ թագաւորն այդ երկիրները մինչեւ Կասպից ծովու եզերքը հպատակեցուցած է⁵: Իր նուաճած երկիրներու մէջ էր նաև Կասպեան նահանգը, որ Անտիոքոս Մեծի մահունէն ետքը Արտաշէսի հայ պետութեան անցաւ (Ստրբ. ԺԱ. 528): Այս նահանգը կը պարփակէր իր մէջը ստորին Երասխի հարթադեղինը եւ արդէն Պլինիոս (Չ. 40) ալ Կասպեան ժողովուրդեան բնակավայր կը նշանակէ Կուրի հարաւային եզրաշխարհը: Կասպեան աշխարհին կը պատկանէր սակայն նաև միջին Երասխի լեռնազաւառը, ուր Կասպիք երկրանունը մինչեւ միջին դարու սկիզբները պահուած էր⁶: Ուրեմն Կուրէ հարաւ ճշգրտօրէն շրջագծուած Կասպեան աշխարհ մը ունինք մեր առջեւը, որ Կասպեան ժողովուրդներու նախկին բնակավայրն որոշելու համար մեծ կարեւորութիւն կը ներկայացնէ:

Սակայն կը սխալի Հերման⁷ համարելով, թէ այս անձուկ աշխարհը Կասպեան ժողովուրդներու բովանդակ բնակավայրը կը կազմէր. նկատի չէ առած նա, թէ շատ ծանրաբէք վկայութիւններ կան անոնց բնակավայրներուն մինչեւ Կալիպոսիան լեռնաշղթան տարածուելուն: Ծովը դժուարաւ կրնար ստացած ըլլալ իր անունը ժողովուրդէ մը, որ անոր եզերքին քանի մը հազարամետր լայն երկր մը կը շօշափէր. նոյնպէս ալ Կալիպոսը

Կասպեան լեռնաշղթայ անունը պիտի չկրէր, եթէ Կասպեան ժողովուրդը քանի մը հարիւր հազարամետր տարածութեամբ դաշտադեղինով մը անջատուած ըլլար անոր ստորոտէն (Հերման, 2272): Այս կոահուսները կը հաստատուին Թէոփանէս Մեդիլինացոյն տեղեկութեամբ, որու համաձայն Կասպեան աշխարհը Պոմպէոսի ժամանակ Աղուաններու մէկ կարեւոր մասն էր (Ստրբ. ԺԱ. 501): Եւ որովհետեւ նոյն ժամանակներն Աղուաններու հարաւային սահմանը կը գծէր Կուրը (Ստրբ. ԺԱ. 501), անմիջաբար կը հետեւի, թէ Կասպեան աշխարհը կը տարածուէր մինչեւ գետին հիւսիսային եզերքը: Ուրեմն Կիսլինգ լեովին իրաւունք ունի, երբ Կուրի ամբողջ գաղտը՝ Կաղուսեան լեռներէն մինչեւ Կալիպոս, եւ ծովէն մինչեւ Վրակաւ սահմանը՝ Կասպեան հնագոյն երկիր կը յայտարարէ⁸: Աղուանները յայտնապէս կը տիրէին երկրին հիւսիսային մասին, իսկ հարաւն աւելի ուշ Մարաց եւ Հայոց աւար դարձած է:

Սակայն եթէ Աղուանները երկրին հիւսիսային մասին տիրապետած են, շատ հաւանական է ուրեմն, որ անոնք եկած ըլլան Կալիպոսէն կամ հիւսիսային դաշտավայրերէ: Հակառակ Ստրաբոնի (ԺԱ. 501), որ անոնց հիւսիսային սահմանը կը նշանակէ Կալիպոսը, Պլինիոս (Չ. 31) եւ Պտղոմէոս (Ե. 12) գիտեն, թէ արեւելեան Կալիպոսը եւ Դերբենդի ծովեզրն Աղուանից մաս կը կազմէին. ճիշդ այս կողմերն է, որ Պլինիոս Ալթանոս գետը, իսկ Պտղոմէոս երկրին զլխաւոր քաղաքը՝ Ալթանա, կը դնեն: Այս տեղեկութիւններու հիման վրայ արդէն Հ. Կիպերա⁹ ուղիղ հետեցուցած է, թէ Աղուաններն այս երկիրներէն եկած են:

Աղուաններու գաղթի ժամանակն ալ կրնանք մասամբ ճշդել: Երբ Պատրիկէս՝ սելեւկեան ծովակալը 285 եւ 282ի միջոցին Կասպեան ծովեզրը կը հետախուզէր¹⁰, արեւմտեան եզրին վրայ միայն երկու ժողովուրդ կը գտնէր՝ Աղուանները եւ Կաղուսացիները (Ստրբ. ԺԱ. 507): Ուրիշ տեղ մը սակայն կը յիշէ գետ Կասպիացիները (Ստրբ. ԺԱ. 514), որոնք յամենայն դէպս ծովեզրին վրայ այլ եւս յատուկ երկրամասի մը վրայ չէին բնակէր: Այս պատճառով Կիսլինգ (Անդ)

¹ Հուս. Պոմոս. Ե. 394, 1:
² Տակ. Պոմ. Ա. 59, Բ. 66:

³ Մոմսէն, անդ:
⁴ Տես Հենարթըն, Ներոն 226 յժ., Chapot, Frontière 36, Täubler, Klio Թ, 14 յՂԵ.:

⁵ Pol. Ե. 55, 2, 8:
⁶ Փաստ. Դ, 2, էջ 159:
⁷ PWRE, X, 2274, Kaspioi հասուածք:

⁸ PWRE, IX, 484:
⁹ Lehrbuch d. a. Geogr., 85:
¹⁰ Տես Neumann, Hermes ԺԹ. 165 յՂԵ.:

Կաւկասի ձորերուն մէջ կ'ուզէ տեղաւորել զանոնք, իսկ Հերման (2274) միջին Երասխի լեռներուն մէջ: Իմ կարծիքովս երկուքն ալ անիրաւ են. այդ միջոցին Կասպեան ժողովուրդը յատուկ պետութիւն մը չէր կազմէր այլ եւս եւ արդէն այն ժամանակ Աղուաններու՝ գուցէ եւ Կաղուացիներու իշխանութեան տակ կ'ապրէին. բայց իրենց անունը դեռ տարիներով մնացած է այն երկրին վրայ, ուր Յոյներն առաջին անգամ ծանօթացած էին անոնց:

Ուրեմն Աղուաններու Կաւկասէ հարաւ հարթադաշտին մէջ տարածուելուն terminus ante quem պէտք է համարինք 285 տարին, իսկ terminus post quemը կու տայ մեզի Պլինիոս իր վերոյիշեալ տեղեկութիւնը (Չ. 40): Պլինիոս՝ անունն անյիշատակ թողած՝ Ալեքսանդրի պատմագրի մը կը պարտի այն տեղեկութիւնը, թէ բուն Կասպեան դոները նոյն չեն Վրական Դարիէն կրճին հետ, այլ թէ աւելի դէպի արեւելք Կասպիացիներու սահմանին վրայ կը գտնուէին: Ուրեմն կը հետեւի, որ Ալեքսանդրի օրերուն Կասպիացիք իրենց բնակավայր ունէին դեռ մինչեւ Կաւկաս: Զորքորդ դարու դարավերջին՝ այսինքն 323ի եւ 285ի միջեւ, Աղուանները իրենց պատմական բնակատեղին հասած են:

Կասպիացիներու եւ Աղուաններու փոփոխակի աղերան այսպէս լուսաւորելէ ետքը, կրնանք Կասպեան եւ Աղուաններու դոներու երկակողմանի դիրքն սրուել: Կ'ուզեն ասոնք նոյնացուելն ծովեզերեայ Դերբենդի կրճին կամ Սալաւատի այն անցքին հետ, որ Կուրի կողմնակի մէկ ձորէն Դերբենդի հարթադաշտը կ'առաջնորդէ, ամէն պարագայի մէջ այն անցքը, որ իրաւամբ Կասպիացիներու անունը կը կրէ, Աղուաններու երկրին մէջ կը գրտնուի. մանաւանդ թէ անոր ռազմական միջակէտը կը կազմէ, վասն զի անոր եւ միայն անոր միջոցով բարձրաբերձ լեռներու վրայէն՝ երկրին երկու մասերուն հաղորդակցութիւնը կը հաստատուի: Ուստի եւ ռազմական-աշխարհագրական շատ մեծ իմաստ մը կայ, երբ Տակիտոս Կասպեան դոները եւ Աղուաններու գէմ ուղղուած արշաւի մը մասին կը խօսի:

Ասկէ զատ քաղաքական եւ անտեսական

կարեւոր պատճառներ տակիտեան տեղեկութեան ի նպատակ կ'ելլեն: Հենարքսըն¹¹ շատ ուղիղ կը մատնանչէ, թէ Ալուաններու գէմ արշաւ մը շատ լաւ կրնայ զետեղուիլ Ներոնի հետեւած Սեւ Ծովու քաղաքականութեան շրջանակին մէջ. իսկ Տէօրլէր¹² կ'ուզէ՝ Կաւկասի անցքերու աղիտումին մէջ՝ տեսնել Դանուբեան սահմանադրոյն փակուածին կարեւոր ամբողջացումը: Սակայն կ'իբրճերու փակուումն այն ատեն միայն հնարաւոր էր, երբ Աղուանները լերան երկակողմն իրենց կայեաններու մէջ անխախտ հպատակութեան տակ պահուէին: Անոնք թէեւ Պոմպէոսի եւ Անտոնիոսի ժամանակները Հռոմի գերիշխանութիւնը ճանչցած էին¹³ եւ Վրացի Միհրզաթի Հայաստանի գէմ ըրած ձեռնարկութիւններուն սիրով իրենց բանակով մասնակցած¹⁴, սակայն 50ական տարուոյն սկիզբը, երբ հռոմէական իշխանութիւնը խորտակուեցաւ Հայաստանի մէջ, Վրացիներու հետ Աղուաններն ալ պետութեան հետ իրենց կապը կորսնցուցին, սակայն անոնց հետ հնազանդութեան չվերադարձան: Երբ Կորբուլլոն¹⁵ ի ամառը՝ հիւսիս-արեւելեան բոլոր հպատակ տէրութիւնները Հայաստանի գէմ կենդրոնացած յարձակումի մը կոչեց, Աղուաններն այս կոչին չհետեւեցան¹⁵: Իսկ 58ի ամառը՝ Տրքուատի փախուստէն յետոյ, հռոմէացի զօրավարն աչքին առջեւ ունի այն հնարաւորութիւնը՝ թէ Տրքուատ կրնար Աղուաններու մօտ ապստամբարան գտած ըլլալ¹⁵: Վստահելով ասիական զուտ հռոմէական երկիրներէն իրենց հեռաւորութեան վրայ եւ յուսալով ցեղակից հիւսիսային ազգերու օգնութեան վրայ՝ Աղուանները ջանացած են իրենց անկախութիւնը պահել տեւականապէս: Ուստի արեւելքի մէջ Հռոմի պատուոյն եւ ազգեցութեան համար անհրաժեշտ էր անոնց հպատակեցումը: Եթէ Մոմսէնի եւ Տէօրլէրի կարծիքով հռոմէական պետութիւնն Աղուաններու առջեւ արդիւնաւորապէս փակել կ'ուզէր Կաւկասի վրայէն անոնց անցքը, իմ համոզումովս պէտք էր նախ Աղուաններու երկիրը գրաւել:

Դարձեալ՝ Պոնտոսի եւ Կասպեան ծովու

¹¹ Ներոն, 226 յլ. :
¹² Klio Թ, 14 յլ. :
¹³ Պլուտ. Պոմպ. 34 յլ., Անտ. 34, Դիոն. 12.
¹⁴ Եւ 1. 4 :
¹⁵ Տակտ. Տար. 2. 32 յլ. եւ ԺԱ. 9 :
¹⁶ Տես վերը Գլ. Ա. յօդ. 1 :

54

միջեւ գտնուած երկիրը մասնաւոր նշանակութիւն մը կը ստանայ Ներոնի հայկական քաղաքականութեան շրջանակին մէջ: Եթէ Հայաստան Արշակունցի մը իշխանութեան կը թողուէր, պէտք էր փոյթ տանիլ բոլոր զրացի երկիրները, որոնք պարթեւ գերիշխանութեան օղակին մէջ չէին, Հռոմի ձեռքին տակ ամփոփել: Մասնաւորաբար Աղուաններու նման մարտական քաջութեամբ եւ հինէն ի վեր ապստամբական սովորութիւններով ցեղ մը՝ իր անկախութիւնը պահելու չէր Հայաստանի հեռաւորադոյն սահմաններուն վրայ:

Հռոմէական ազգեցութիւնը Հայաստանի վրայ այն ատեն միայն բաւականաչափ ապահովուած պիտի ըլլար, եթէ հպատակ պետութիւններու օղակը սկսելով միջին Եփրատէն՝ Սամոսատի քովէն մինչեւ Կուրի ծովախառնունքն երկարէր ու փակուէր: Նոյն իսկ պարթեւական նորահաստատ բարեկամութեան տեսակէտով՝ Հռոմի զինուորական զէրքին ամէն հնարաւոր ուժեղ ընդարձակում միայն նպաստաւոր էր:

Պարթեւական բարեկամութեան կից՝ Ներոնի արեւելեան քաղաքականութիւնն իր կապարճին մէջ ունէր դեռ երկրորդ սլաք մը՝ Վրկանեան դաշնակցութիւնը: Կասպեան ծովու հարաւ-արեւելեան եզրին վրայ հաստատուած այս նոր իշխանութիւնը, որու գործակցութիւնը պարթեւական մարտին մէջ այնքան հաճելի եղաւ¹⁶, որ հռոմէական կառավարութեան ապագայի հաշիւներուն մէջ կարեւոր աղբակ մը կը կազմէր, ու անոր արշակունի իշխանը մեծարժէք անձնաւորութիւն մըն էր պարթեւական գալիք բարդութիւններու մէջ: Բայց Վրկանի հետ այս բաղձալի տեւական կապը հաստատել կարելի էր միայն Կասպեան ծովու եզերքէն, ուստի Վրկանեան դաշնակցութեան ցանկալի խորացումը՝ Կուրի աղուանեան հարթադաշտին գրաւումին կը մղէր:

Ուրեմն չորս քաղաքական գանդան շարժառիթներ ի նպատակ կ'ելլեն Տակիտոսի հաղորդած Կասպեան արշաւին: Արեւելքի մէջ հռոմէական պատիւը այն ատեն կը փրկուէր, երբ պատժական արշաւ մը կատարուէր յամառ Աղուաններու ապստամբութեան գէմ իսկ Կաւկասեան անցքերու Սարմատներու

գէմ փակուումն արդիւնաւոր կրնար ըլլալ միայն, եթէ այս կէս վաշկատուն ժողովուրդն արեւելեան Կաւկասի երկու կողմն ալ անխախտ հպատակութեան մէջ պահուէր: Հայաստանի զինուորական շրջափակումը, — անոր քաղաքական ազատ դիրքին անհրաժեշտ հակապահանջը, — Աղուաններու ներփակումով միայն կ'ամբողջանար. եւ ի վերփակումով միայն կ'ամբողջանար. եւ ի վերջոյ Վրկանեան դաշնակցութիւնն այն ժամանակ միայն տեւական արժէքով քաղաքական օժանդակ ազդակ մը կը դառնար, երբ յաջողէր Հռոմ՝ աղուան ծովեզրին գրաւումով՝ տեսակ մը գրացիական աղերս ստեղծել նոր դաշնակցին հետ:

Քաղաքական ծանրակշիռ այս պատճառներուն վրայ դեռ կը բարդուէին անտեսական շարժառիթներ, որոնք, ինչպէս ծանօթ է, ներոնեան վարչական խորհուրդներուն մէջ ընդարձակ տեղ կը բռնէին: Սելեւկոս Նիկատորի եւ անոր որդւոյն ու դահակցին Անտիոքոսի հրամանաւ՝ Պատրոկլէս երրորդ դարու 80ական թուականներուն Կասպեան ծովեզրները խուզարկած էր¹⁷ եւ իմացած էր, թէ նաւագնացութեան ջրուղի մը կար, որ Բախտրիայէն Ոքսոսի վրայէն Կասպից ծով կը հանէր, եւ այս ճամբով հնդկական եւ չինական ներածումին մէկ մասն արեւելքէն անոր Աղուաններու երկիրը գտնուած միջոցին՝ այս տեղեկութեան ճշգրտութիւնը ստուգած էին (Վարրոն. առ Պլին. 2. 52): Ուրեմն հոս ուղի մը կար, որ Բախտրիայի մէջ գտնուող՝ ներքին-ասիական միջերկրեան վաճառականութեան կենդրոնը կը տանէր, եւ որ պարթեւական հակակռէն զերծ էր եւ հռոմէացի վաճառականն անկախ կ'ընէր պարթեւ միջնորդութենէն: Այս ճամբուն տիրանալու ջանքը կատարելապէս կը համապատասխանէ ներոնեան Արարիայի եւ Եթովպիայի հարաւ-արեւելեան քաղաքականութեան: Բայց ինչպէս որ հոն՝ հարաւային Արարիայի եւ Մերովիէի պետութեան մէջ՝ զինուորական կայեանի մը հաստատումն անհրաժեշտ էր, նոյնպէս ալ հոս անցման երկիրը՝ Աղուաններու կրկիրը, պէտք էր Հռոմի պատկանիլ: Այսպէս ուրեմն գանդան պատճառներ՝ Տակիտոսէ աւանդուած

¹⁷ Տես այս Գլխոյ 3րդ յօդուածը :
¹⁸ Սարք. ԺԱ. 509 բառ Երատոսթենէսի եւ Արիստրոպի :

¹⁶ Տես վերը Գլ. Ա. յօդ. 4 :

արշաւը դէպի Աղուաններու երկիրը յանձնա-
րարելի կ'ընեն:

Ասոր հակառակ Պլինիոսի աշխատանք ար-
շաւին ընդհանուր պատճառներն էապէս տը-
կար են: Թէ ներոն ձեռնարկած է մեծ պատ-
րաստութեամբ սարմատական ալէկոծեալ
յորձանքը թմբարգել ընել, անժխտելի է.
բայց ինչպէս տեսանք այս նպատակին աւելի
կը ծառայէր Աղուաններու երկիրն գրաւումը
քան թէ Ալաններու դէմ արշաւ մը, որ միշտ
առանց տեւական արդիւնքի զինուորական
ցոյց մը պիտի մնար: Շապոյ¹⁹ եւ Տէօրլեր²⁰
կ'առարկեն, թէ հոմէական շահերը Դա-
րիէլի՝ վրական կրճին գրաւումովը լիապէս
ապահովուած էին, մինչ Դերբենդի՝ Աղու-
աններու կերճը ճամբայ կը բանար միայն
դէպի Պարթեաններու պետութիւնը եւ դէպի
անոր հայ եւ ատրպատականեան արբանեակ-
ները: Կարծեմ ասոր հակառակ կըցայ ապա-
ցուցանել, թէ ներոնի վարչական խորհուրդ-
ները հոմէական շահերու նախկին շրջա-
նակէն շատ անդին կը ձգուէին եւ կը ձգնէին
հետզհետէ պարթեական պետութիւնն ալ
աւելի իրենց սահմաններու մէջ փակելու²¹:
Ուրեմն Տակիրտոսի աւանդութիւնն այս կող-
մանէ ալ առարկութիւն չի վերցնէր:

Տակիրտոսի տեղեկութեան դէմ է ուրեմն
միայն Պլինիոսի ճշտութիւնը, որ եթէ իբրեւ
ժամանակակից քաղաքագէտի մը ճշտու-
թիւնն արհամարելի չէ, սակայն բանասիրո-
րէն ալ պէտք է որ գերազնահատուի: Վասն
զի ճիշդ կասկեան եւ անդրկասկեան երկիր-
ներու ստորագրութեան մէջ մասնաւորա-
պէս վատ է իր աշխատանքը: Հոս համառո-
տագիրներու այնպիսի առատութիւն մը ունի
իր տրամագրութեան տակ, որ չէ կըցած
տիրանալ անոնց եւ տեղ տեղ անհնարին
խառնակութիւն մը ստեղծած է²²: Այսպէս
Կասպեան ժողովուրդը, զոր քիչ առաջ Կուրէ
հարաւ կը գետեղէ, քանի մը տող ետքը բո-
լորովին անփութօրէն՝ կասպեան դոներէն
հիւսիս մինչեւ ծով, վրկանեան արեւմտեան
սահմանին վրայ կը տեղաւորէ²³: Եթէ իր
տեղեկութիւններու արժէքը քննել կ'ուզենք,
ստիպուած ենք արեւելեան կաւկասեան եր-

կիրներու համար իր առջեւն ունեցած ազ-
րիւրներու հարցը յարուցանել:

Ինքը հինգ հեղինակ կ'անուանէ, որոնցմէ
կախում կրնայ ունենալ խնդրական մասե-
րուն մէջ: Կուրնելիոս նեպոսը կը յիշէ կա-
կասեան կիրճերու լայնութեան մասին տե-
ղեկութեան մը առթիւ (Չ. 31). Վարրոնի
կը պարտի Կասպեան ծովու իր ստորագրու-
թիւնը եւ անոր ջրոյն անուշութեան ծանո-
թութիւնը (Չ. 38, 51). Ագրիպայի քար-
տէսին վրայ կարգացած է Կաւկասի արեւ-
ելեան վերջաւորութեան սէպ եզերքը (Չ.
39). Կաւկասեան անցքերու ընդարձակու-
թեան եւ Սելեւկոս Նիկատորի ջրուղի մը
չինելու ճրագրի մասին իբրեւ աղբիւր կը
յիշէ Կլաւդիոս Կայսեր Ասիայի վրայ գրած
գործը (Չ. 31). վերջապէս գործածած է
Կորբուզոնի դէտերու քարտէսը (Չ. 40):

Այս աղբիւրներէն նեպոս եւ Վարրոն
հիմնուած են Պոմպէոսի հետախուզութիւն-
ներու վրայ, որոնք իր անձնական գրագրին՝
Թէօփանէս Մեալիւնացոյն ձեռքով հանրու-
թեան մատչելի եղան: Ագրիպայա կրնար դեռ
գործածել Վենտիտիոսի տեղեկութիւնները,
որ իբրեւ Անտոնիոսի պատուիրակը մինչեւ
Կասպից ծովու եզերքն յառաջացած էր²⁴:
Կլաւդիոս կ'երեւայ, թէ միայն գրական ա-
ւանդութիւն մը օգտագործած է, ինչպէս կը
տեսնուի Պատրոկլէսէ փոխ անուած Իսթ-
մոսի լայնութեան մասին գարմանալի տե-
ղեկութենէն: Պլինիոսի այս երկիրներու վրայ
տուած նոր տեղեկութիւններու համար կը
մնայ ուրեմն միայն Կորբուզոնի դէտերուն
քարտէսը եւ տեղեկագիրը:

Թէօփանէսի առաջին դուրս, որ ամէ-
նէն լաւ պահուած է Սարաբոնի քով, Պլի-
նիոս երկու նոր նշանակելի տուեալներ ունի:
Նա իբրեւ առաջինը գիտէ թէ Աղուանները
նաեւ լեռնաշղթային հիւսիսակողմեան նեղ
եզերադաշտը կը բնակէին (Չ. 39), եւ դար-
ձեալ նա գիտէ իբրեւ միակը, թէ կայ դեռ
արեւելեան Կաւկասի ուրիշ անցք մը, որ
երաւամբ Կասպից դուռ անունը կը կրէ (Չ.
40): Այս սերտիւ կապուած երկու տեղեկու-
թիւններն իբրեւ մեր ծանօթութեան համա-
ձայն միայն Կորբուզոնի դէտերէն կրնան
բղիւխի, որոնք այս ազերսով ալ կը յիշուին
իրմէ (Չ. 40): Այսպէս նոյն իսկ Պլինիոսի

²⁴ Պլուտ. Անտ. 34, Դիոն. Լէ. 4:

ներկայացումէն կը հետեւի, թէ ասոնք ոչ
լեռնաշղթային մէջտեղն եղող կիրճէն, այլ
արեւելք գտնուող Դերբենդի կիրճէն օգ-
տուած են:

Ի՞նչպէս ուրեմն Պլինիոս իր խոտորող
կարծիքին յանգած է. կ'երեւայ թէ ինքն իսկ
զոհ եղած է այն սխալին որուն դէմ եռան-
դով կը կուռի: Իմ կարծիքովս իր Կասպեան
համառոտագիրներու հանրածանօթ անկար-
գութեան համընթաց՝ իր հակահերոնեան տե-
սութիւնները պատճառ եղած են այս դժպի-
խաղին: Հասարակութիւնը դէպի Կասպեան
դոները յայտարարուած արշաւին առարկան
դարձուցած է վրական կիրճը եւ այդ ար-
շաւը կապած է սարմատական կոիւններու
հետ²⁵: Պլինիոս Կորբուզոնի դէտերու եւ ա-
նոնց քարտէսին կը պարտի այս սխալին ուղ-
ղումը²⁶: Սակայն իր ծանօթագրութիւննե-
րու խառնակոյտին մէջ այս կապը կորսնցու-
ցած է եւ հոմէական հասարակութեան
սխալ ըմբռնումը՝ առելի կայսեր պատուի-
րակներուն վերադրելով՝ անոր ուղղումը
գործածած է այն իսկ անձերուն դէմ, որոնց
կը պարտի այդ ճշգրտումը: Ասով իրեն բաղ-
ձալի առիթ մը կը ներկայանար անգամ մը
եւս մեծախօս, բայց անգործ ներոնին վրայ
նշաւակի ցնցոտի մը նետելու: Ասոր հակա-
ռակ Տակիրտոս հոս ալ արքունի աղբիւրներէ
աննելով, կայսեր ճշմարիտ դիտումները պա-
հած է ապագայ սերունդներուն²⁷:

Հիմայ հարց կը բարձրանայ, թէ ինչո՞ւ
Աղուաններու երկիրը եւ վրկանը հոմէա-
կան պետութեան համար իրենց այս կա-
րեւոր նշանակութիւնը ստացած են: Այս
հարցին լուծումին նուիրուած է ներկայ
գլուխս: Առ այս նախ պէտք ենք զննել ա-
րեւելեան Իրանի քաղաքական դիրքն ա՛յն-
պէս, ինչպէս կերպարանաւորեցաւ ան մեր
թուականին դարադարձին՝ առաջին պար-
թեական պետութեան քայքայումէն ետքը:
Այն ժամանակի քաղաքական վայրափոխում-
ները հնարաւորութիւն պիտի տան մեզի դա-
տաստան մը կազմելու դաշնակցութեան կրն-
քումի վայրկեանին վրկանեան տէրութեան ու-
նեցած ընդարձակութեան եւ նշանակութեան

²⁵ Տես յետոյ Գլ. Գ. յոդ. 2:

²⁶ Նոր Աղբիւրանդը. ներոնի հետախուզութեան է
յամենայն դէպս Աղբիւրանդի պատմիչին համապա-
տասխան տեղեկքը:

²⁷ Տակիրտոսի այս աղբիւրին մասին տես Klio
ԺԹ:

վրայ: Յետոյ պիտի քննենք վրկանի եւ Աղու-
անից երկիրն երթեւեկային աշխարհագրա-
կան դիրքը, միանգամայն պիտի տեսնենք
կարեւորութիւնը նաւազնացութեան այն
ճամբուն, որ Բակտրիայէն հոմէական Կող-
քիսի արեւելեան սահմանը կը հանէր:
Ասոնցմէ պիտի հետեւին ներոնեան հիւսիս-
արեւելեան քաղաքականութեան երեք կա-
րեւոր հանգրուանները. ուժեղացում պոն-
տական մեկնակէտի դիրքին, Աղուաններու
հպատակեցումը եւ անդր-կաւկասեան ծո-
վային երթեւեկի ձեռնարկը:

(Շարունակելի):

Հ. Մ. ՀԱՊՈՋԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՍՏԻՎԱՆՆԵՐՈՒ ԹԱՄԱՆ- ԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 833—887 ՏԱՐԻՆԵՐՈՒ ՅԲՋԱՆԻՆ

Հայաստան ալ-Մութեմաքքիլի ժամա-
նակ (չ. 232—247 = 847—861) նոր խոտ-
վութիւններ ծագեցան եւ ամիրապետը Հայ-
աստանի եւ Ատրպատականի ոստիկան ա-
նուանեց Աբու Սայիդ Մուհամմէդ իբն Ի-
սաֆ ալ-Մերվեքի: Սակայն ասիկա յանկար-
ծամահ կ'ըլլայ, յառաջ քան իրեն յանձնուած
նահանգները հասած ըլլալ: Տարբեր⁴⁶ ա-
նոր մահն 236ին (850—851) կը զնէ: Ըստ
Թովմաս Արծրունցի⁴⁷ «Աբու Սեթ» արգէն
յառաջագոյն ոստիկան անուանուած էր, սա-
կայն տակաւին հայ աշխարհն ոտք չէր կո-
խած, երբ հայ իշխանները պահանջուած
հարկերն անոր ուղարկեցին եւ խնդրեցին,
որ ետ դառնայ, որով նա Մամառա դարձաւ
եւ անդրադոյն հարկերը վերցնելն Արզնի ա-
միրային՝ Մուսա իբն Չուրարային թողուց:
Վաստուրական Ալա անունով մէկը հարկերը
պիտի ժողվէր: Սակայն երկուքն ալ հայերէն
պարտութիւն կրեցին: Աբու Սայիդ, որ դար-
ձեալ դէպի Հայաստան մեկնեցաւ, ճանա-
պարհորդութեան ժամանակ յանկարծ մե-
տաւ⁴⁸ եւ Սալիֆան հայկ. տոմարի 300ին

⁴⁶ III, 1407. Իրն ալ-Սեթի VII, 37, de Goeje, Fragm. II, 546:

⁴⁷ էջ 107—108. Համա. Թովմաս MSOS:

⁴⁸ էջ 116:

¹⁹ Շապոյ, էջ 37 յջ. եւ 367 յջ.:
²⁰ Klio Թ, 18:
²¹ Տես Գլ. Ա, յոդ. 4:
²² Չ. 46 յջ. տես առ այս Կիւլինդ Ի PWRE.
VIII, 434, յոդ. Herakleia 22:
²³ Չ. 45, տես առ այս Herrmann, 2273: